Գիտահետազոտական գործուղումներ գիտնականների և բուհերի դասախոսների համար նպատակը (ուշադրություն՝ փոփոխված ընթացակարգ)

- Բուհերում դասավանդող կամ գիտահետազոտական ինստիտուտներում աշխատող արտասահմանցի գիտնականներին հնարավորություն է ընձեռվում գերմանական պետական որևէ բուհում կամ հետազոտական կենտրոններում իրականացնել գիտահետազոտական աշխատանք:

Տևողությունը

- Կախված Գերմանիայում իրականացվելիք ծրագրից՝ կրթաթոշակ կարող է տրամադրվել մեկից երեք ամսով: Կրթաթոշակն ուժի մեջ կարող է մտնել 2015թ. հունիսի 1-ից ոչ շուտ:

Կրթաթոշակային վճարումները

- Կրթաթոշակ, որի չափը կախված կլինի դիմորդի ակադեմիական աստիճանից, ասիստենտների համար՝ 2000 եվրո, երիտասարդ դոցենտների և պրոֆեսորների համար՝ 2150 եվրո, բացառիկ դեպքերում՝ նաև 2300 եվրո:
- Ճանապարհածախս
- Լրացուցիչ միջոցներ ընտանիքի ուղեկցող անդամների համար չի տրամադրվում:

Դիմելու համար անհրաժեշտ պայմանները

- DAAD-ի գիտահետազոտական գործուղումներ ծրագրին կարող են դիմել գիտնականներ, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և աշխատում են բուհերում **կամ գիտահետազոտական ինստիտուտներում:**
- Ի թիվս այլ չափանիշների (հրապարակված նոր հոդվածներ, ինչպես նաև հրապարակումներ արտասահմանյան ամսագրերում)՝ ընտրության համար կարևոր չափանիշ է Գերմանիայում իրականացվելիք գիտահետազոտական աշխատանքի համոզիչ հիմնավորումը: Գիտահետազոտական աշխատանքը պետք է լինի լավ պլանավորված և համաձայնեցված գերմանացի գործընկերոջ հետ:
- Գերմանացի գործընկերոջ հրավեր, որտեղ հստակորեն արտահայտված է համագործակցելու և աշխատելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու պատրաստակամությունը:
- Կախված աշխատանքային լեզվից գերմաներենի կամ անգլերենի լավ իմացություն:
- DAAD-ի գիտահետազոտական գործուղումներ կրթաթոշակային ծրագրին իրավունք է տրվում դիմել միայն երեք տարին մեկ անգամ:

Դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերը

Դիմումի ձև ներկայցվում է on-line – տարբերակով, **MOVE**-համակարգով (www.funding-guide.de)

Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել նաև թղթային տարբերակով՝ երեք օրինակից :

- Դիմումի ձև՝ www.funding-guide.de, MOVE-համակարգով, գրանցվելուց և դիմումաձևը լրացնելուց հետո պետք է վերբեռնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք ներկայացված են ստորև:
  Մանրամասները նայել նաև daad.am հայաստանյան կայք -էջում
- Դիմումի ձև՝ լուսանկարով (4 լուսանկար)
- Կենսագրություն
- Գիտահետազոտական նպատակի շարադրանք
- Գիտական հրապարակումների ցանկ
- Գերմանիայում գտնվելու ժամանակացույց և տեղացույց
- Գիտական աստիճանի շնորհագրի (թեկնածուի վկայականի) պատճեն
- Գերմանացի գործընկերոջ հրավեր

Համապատասխան վկայականները պետք է վերբեռնել միայն նշված վերնագրի տակ:

Բոլոր փաստաթղթերը պետք է հանձնել առանց ամրակների, միակողմանի տպված: Լրացուցիչ փաստաթղթեր չեն ընդունվում և խնդրում ենք նաև չվերբեռնել:

Դիմումներն ընդունվում են մինչև սույն թվականի նոյեմբերի 10-ը: